ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

11.12.2018թ. նիստի

<u>Օրակարգ</u>

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի թափուր տեղի ընտրության հարցը:
2. 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 24-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար մ.գ.թ., դոց. Զավեն Հարությունյանի ընտրության հարցը (զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., պրոֆ. Ա. Չուբարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոց. Ս. Աբրահամյանը, բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյանը, բ.գ.դ., պրոֆ. Շ. Պարոնյանը, բ.գ.թ., դոց. Հ. Բաղդասարյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընտրել հաշվիչ հանձնաժողով Ս. Գասպարյանի (հանձնաժողովի նախագահ), Հ. Բաղդասարյանի (հանձնաժողովի անդամ), Լևոն Առաքելյանի (հանձնաժողովի անդամ) մասնակցությամբ և անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությունից հետո, ըստ հաշվիչ հանձնաժողովի նախագահի զեկույցի, ձայների 21 կողմ, 2 դեմ, 1 անվաներ արդյունքների հիման վրա հաստատվեց Զավեն Հարությունյանի ընտրությունը Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ Դեկանը զեկուցեց, որ 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակի սոց. հարցման արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, կան մասնավոր դեպքեր, որ դասախոսին տրված գնահատականը ցածր է և ուսանողների կարծիքները նման դեպքերում բացասական են: Դեկանը հորդորեց ամբիոնների վարիչներին ուշադրություն դարձնել այդ դեպքերի վրա, զրուցել այդ դասախոսների հետ և փորձել շտկել թերացումները:

3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ Ա. Հաջի-Հակոբյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Ատեստավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիաննա Կարապետյանին:

Գիտխորհրդի նախագահ՝ Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝ Գ. Մուրադյան

11 դեկտեմբերի 2018 թ.